



ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության  
ամբիոնի ասպիրանտ

## ԶԱՐԳԱՑՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԱՐՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում փորձ է արվել զարգացող տնտեսությամբ երկրները կլաստերային վերլուծության գործիքակազմի կիրառմամբ դասակարգելու սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքների տեսանկյունից համասեռ խմբերի, վեր հանելու առանձին խմբերի բնութագրիչները, դրա հիման վրա իրականացնելու համեմատական վերլուծություն: Ստացված արդյունքները կարևոր նշանակություն ունեն սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականության ուղենիշների ընտրության, մեխանիզմների վերանայման, առանձնահատկությունների բացահայտման, ինչպես նաև վերափոխումների արդյունքների համակողմանի վերլուծության առումներով:

**Հիմնաբառեր.** սոցիալ-տնտեսական վերափոխումներ, կլաստերային վերլուծություն, զարգացող տնտեսությամբ երկրներ, վերափոխումների քաղաքականություն

JEL: C1, N30, O1

Սոցիալ-տնտեսական վերափոխումների ռազմավարության մշակման և իրականացման արդյունավետության մակարդակի բարձրացումը պահանջում է տնտեսության կառուցվածքային և ինստիտուցիոնալ ձևափոխությունների արդյունքների քանակական գնահատում: Հարկ է նշել, որ վերափոխումների արդյունքների գնահատումը միշտ եղել և մնում է տարբեր միջազգային կառույցների հետազոտման կարևորագույն հիմնախնդիրներից մեկը, որն էլ պայմանավորում է այս շրջանակներում հետազոտության խորացման կարևորությունը:

Ըստ էության, սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքների գնահատումը լայն հետազոտական տիրույթ է, որի կարևորագույն բաղադրիչներից մեկը զարգացող տնտեսությամբ երկրների դասակարգումն է: Դա հնարավորություն է տալիս խմբավորելու երկրներն ըստ վերափոխումների արդյունքների, սահմանելու լավագույն արդյունք արձանագրած երկրների վերափոխումների քանակական բնութագրիչները, ինչն առանցքային նշանակություն ունի վերափոխումների քաղաքականության վերանայման, քանակական գնահատականների ցանկալի մակարդակից շեղումների բացահայտման և ուղենիշների ճշգրտման համար: Ուստի, փորձ է արվել վերափոխումների մասնակի ցուցանիշների լայն հավաքածուի հիման վրա իրականացնելու զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների դասակարգում և համեմատական վերլուծություն:

Սույն խնդիրը լուծելու համար օգտվել ենք կլաստերային վերլուծության գործիքակազմից: Ջերծ մնալով կլաստերային վերլուծության մեթոդաբանության մաթեմատիկական մասի նկարագրությունից՝ նշենք, որ կլաստերային վերլուծության գլխավոր նպատակը հայտանիշների համախմբությամբ բնութագրվող՝ հետազոտվող օբյեկտների բազմության բաժանումն է որոշակի իմաստով համասեռ խմբերի (կլաստերների): Սա նշանակում է, որ լուծվում է տվյալների դասակարգման և դրանցում համապատասխան կառուցվածքի բացահայտման խնդիրը: Այլ ձևակերպմամբ, ենթադրվում է միմյանցից հեռացված օբյեկտների խմբերի առանձնացում կամ համախմբության բաժանում՝ ըստ կուտակման կամ խտության տիրույթների:

Կլաստերային վերլուծության մեթոդների օգտագործման անհրաժեշտությունը, առաջին հերթին, պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանք հնարավորություն են տալիս բացահայտելու համախմբության միավորների ներքին կապերը, կառուցելու գիտականորեն հիմնավորված դասակարգումներ<sup>1</sup>:

Ստորև իրականացվել է նմանատիպ վերլուծություն, որի հիմքում սոցիալական, տնտեսական, քաղաքական և կառավարման ոլորտներում վերափոխումների գնահատման հետևյալ ելակետային ցուցանիշներն են.

1. բնակչության 1 շնչի հաշվով համախառն ներքին արդյունքը,
2. ՀՆԱ աճը,
3. արտահանման մասնաբաժինը ՀՆԱ-ում,
4. ներմուծման մասնաբաժինը ՀՆԱ-ում,
5. ծառայությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում,
6. գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում,
7. արդյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում,
8. գործազրկության մակարդակը (ընդհանուր աշխատուժի նկատմամբ),
9. համախառն կապիտալի մասնաբաժինը ՀՆԱ-ում,
10. առողջապահական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում,
11. կյանքի սպասվող տևողությունը,
12. կոռուպցիայի վերահսկման աստիճանը,
13. կառավարման արդյունավետությունը,
14. կարգավորման որակը,

<sup>1</sup> Տե՛ս **Орлова И.В.**, Многомерный статистический анализ в экономических задачах: Компьютерное моделирование в SPSS, учебное пособие. М., 2009, էջ 91:

15. քաղաքական կայունությունը և բռնությունների, ահաբեկչությունների բացակայությունը,
16. ձայնի իրավունքը և հաշվետվողականությունը հասարակությանը,
17. պետականությունը,
18. քաղաքական մասնակցությունը,
19. իրավունքի գերակայությունը,
20. ժողովրդավարական ինստիտուտների կայունությունը,
21. քաղաքական և սոցիալական միասնացումը,
22. սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը,
23. շուկան և մրցակցությունը,
24. արժույթային և գնային կայունությունը,
25. սեփականության իրավունքի պաշտպանությունը,
26. բարեկեցության մակարդակը,
27. տնտեսության նկարագիրը,
28. կայունությունը,
29. վերափոխումների կառավարման բարդության աստիճանը,
30. կառավարման ներուժը,
31. ռեսուրսների արդյունավետ օգտագործումը,
32. համաձայնության ձեռքբերումը,
33. միջազգային համագործակցությունը<sup>2</sup>:

Վերլուծությունն ընդգրկել է զարգացման տարբեր մակարդակ ունեցող 100 երկիր (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

**Երկրների ցանկը<sup>3</sup>**

Աֆղանստան	Չադ	Հնդկաստան	Մոզամբիկ	Սլովենիա
Ալբանիա	Չիլի	Ինդոնեզիա	Նամիբիա	ՀԱՀ
Ալժիր	Չինաստան	Իրան	Նեպալ	Հարավ. Կորեա
Արգենտինա	Կոլումբիա	Հորդանան	Նիկարագուա	Շրի Լանկա
Հայաստան	Կոնգո	Ղազախստան	Նիգեր	Սուդան
Ադրբեջան	Կոստա Ռիկա	Քենիա	Նիգերիա	Տաջիկստան
Բահրեյն	Կոտ դի Կուար	Ղրղզստան	Պակիստան	Տանզանիա
Բանգլադեշ	Խորվաթիա	Լատու	Պարագվայ	Թաիլանդ
Բելառուս	Չեխիա	Լատվիա	Պերու	Տոգո
Բենին	Ղոմինիկյան Հանր.	Լիբանան	Ֆիլիպիններ	Թունիս
Բոլիվիա	Էկվադոր	Լիտվա	Լեհաստան	Թուրքիա
Բոսնիա և Հերց.	Եգիպտոս	Մակեդոնիա	Ռումինիա	Թուրքմենստան
Բոթսվանա	Էլ Սալվադոր	Մադագասկար	Ռուսաստան	Ուգանդա
Բրազիլիա	Էստոնիա	Մալավի	Ռուանդա	Ուկրաինա
Բուլղարիա	Վրաստան	Մալայզիա	Սաուդ. Արաբիա	Ուրուգվայ
Բուրկինա Ֆասո	Գանա	Մալի	Սենեգալ	Ուզբեկստան
Բուրունդի	Գվատեմալա	Մեքսիկա	Սերբիա	Վենեսուելա
Կամբոջա	Գվինեա	Մոլդովա	Սիերա Լեոնե	Վիետնամ
Կամերուն	Հոնդուրաս	Մոնղոլիա	Սինգապուր	Չամբիա
Կենտրոնաաֆրիկ. Հանր.	Հունգարիա	Մարոկո	Սլովակիա	Չինթալ

<sup>2</sup> 1–16 ցուցանիշները Համաշխարհային բանկի, իսկ 17–33-ը՝ Բերթելսման հիմնադրամի գնահատականներն են:

<sup>3</sup> Աղյուսակը կազմել է հեղինակը:

Վերոնշյալ ցուցանիշների հիման վրա վիճակագրական վերլուծության ծրագրային փաթեթի (Statistical analysis software package, SPSS) գործադրմամբ կատարվել է կլաստերացում: Կլաստերային վերլուծության հիմքում ընկած է երկրների համասեռ խմբերի՝ կլաստերների օպտիմալ քանակի որոշումը: Սույն խնդիրը լուծելու նպատակով օգտագործել ենք երկփուլ կլաստերացման մեթոդը:

Ստորև ներկայացնում ենք 2016 թ. ցուցանիշների հիման վրա կատարված կլաստերային վերլուծության արդյունքները: Կլաստերացման արդյունքում ձևավորվել են 3 կլաստերներ: Առյուսակ 2-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս ձևավորված կլաստերներից յուրաքանչյուրում ընդգրկված երկրների թիվը: Այսպես՝ ամենամեծ թվով երկրները ներառված են երկրորդ կլաստերում, իսկ ամենափոքր թվով երկրները՝ երրորդում:

## Առյուսակ 2

### Երկրների թիվն ըստ կլաստերների 2016 թ.<sup>4</sup>

	Կլաստեր 1	Կլաստեր 2	Կլաստեր 3
Երկրների թիվը	37	46	17

Նկատենք, որ կլաստերների առանձնացման համար առավել կարևոր են համարվել *կայունություն, վերափոխումների կառավարման բարդության աստիճան, շուկա և մրցունակություն* ցուցանիշները: Սա վկայում է այն մասին, որ մեր դիտարկած երկրներում այս ցուցանիշներն ունեն առավել մեծ դերակատարություն երկրների համասեռ խմբերի տարբերակման համար: Փոխարենը՝ կլաստերացման գործընթացում զարմանալիորեն քիչ ազդեցություն են ունեցել տնտեսական աճ, *գործազրկության մակարդակ, համախառն կապիտալի, արդյունաբերության և առողջապահության ծախսերի տեսակարար կշիռը* ՀՆԱ-ում ցուցանիշները:

Կլաստերներից յուրաքանչյուրի նկարագրման համար լայն և բազմաշերտ առարկայական տիրույթ է ապահովում դրանց վերջնական կենտրոնների վերլուծությունը: Կլաստերների վերջնական կենտրոնները ցույց են տալիս կլաստերներից յուրաքանչյուրում ըստ վերափոխումների առանձին ցուցանիշների արձանագրված միջին արժեքները: Դրանցից ելնելով՝ կարելի է պատկերացում կազմել կլաստերների բնույթի մասին: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարող ենք նշել, որ վերափոխումները բնութագրող բոլոր գնահատականներով ամենաբարձր արժեքներ արձանագրել են երրորդ կլաստերում ընդգրկված երկրները, ուստի այն կարող ենք բնորոշել որպես «լավագույն»: Նույն տրամաբանությամբ՝ առաջին և երկրորդ կլաստերներին կարող ենք տալ, համապատասխանաբար՝ «վատագույն» և «միջին» անվանումները: Փաստորեն, այն երկրները, որոնք նշանակալի և կենսունակ սոցիալ-տնտեսական վերափոխումներ են իրականացրել, կհայտնվեն լավագույն կլաստերում՝ ապահովելով վերափոխումների ցուցանիշների ամենաբարձր արժեքը:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ չնայած լավագույն կլաստերում ընդգրկված երկրները, մյուսների համեմատությամբ, բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշի շատ ավելի բարձր մակարդակ ունեն (16304,7

<sup>4</sup> Հաշվարկել է հեղինակն ըստ Բերթելսման հիմնադրամի և Համաշխարհային բանկի տվյալների:

ԱՄՆ դոլար), այնուհանդերձ, բնութագրվում են տնտեսական աճի ամենացածր ցուցանիշով (2,4%):

Աղյուսակ 3

**Կլաստերների նկարագիրը 2016 թ.<sup>5</sup>**

Ցուցանիշներ	Կլաստերներ		
	1՝ վա-տազույն	2՝ միջին	3՝ լավագույն
Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	2052,59	5488,59	16304,72
ՀՆԱ աճ (%)	3,34	2,96	2,37
Արտահանման մասնաբաժինը ՀՆԱ-ում (%)	26,62	36,31	66,29
Ներմուծման մասնաբաժինը ՀՆԱ-ում (%)	36,77	43,94	62,43
Ծառայությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)	48,07	58,36	65,22
Գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)	25,81	11,03	3,91
Արդյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)	25,67	30,15	30,87
Գործազրկության մակարդակն (ընդհանուր աշխատուժի նկատմամբ, %)	6,85	8,68	9,22
Համախառն կապիտալի մասնաբաժինը ՀՆԱ-ում (%)	23,97	25,31	23,03
Առողջապահական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (տոկոս)	5,74	6,40	7,20
Կյանքի սպասվող տևողությունը (տարի)	63,12	71,78	77,00
Կոռուպցիայի վերահսկման աստիճանը (-2.5-ից 2.5 սանդղակ)	-0,86	-0,41	0,63
Կառավարման արդյունավետությունը (-2.5-ից 2.5 սանդղակ)	-0,86	-0,15	0,83
Քաղաքական կայունություն և բռնությունների, ահաբեկչությունների բացակայություն (-2.5-ից 2.5 սանդղակ)	-0,93	-0,41	0,67
Կարգավորման որակը (-2.5-ից 2.5 սանդղակ)	-0,89	-0,09	0,94
Չայնի իրավունք և հաշվետվողականություն հասարակությանը (-2.5-ից 2.5 սանդղակ)	-0,92	-0,23	0,76
Պետականություն (1-ից 10 սանդղակ)	6,64	7,72	9,71
Քաղաքական մասնակցություն (1-ից 10 սանդղակ)	4,43	6,29	8,82
Իրավունքի զերակայություն (1-ից 10 սանդղակ)	3,74	5,39	8,48
Ժողովրդավարական ինստիտուտների կայունություն (1-ից 10 սանդղակ)	3,58	5,59	8,74
Քաղաքական և սոցիալական միասնացում (1-ից 10 սանդղակ)	4,08	5,62	7,73
Սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ (1-ից 10 սանդղակ)	2,73	4,65	7,88
Շուկա և մրցակցություն (1-ից 10 սանդղակ)	4,65	6,92	9,09
Արժույթային և գնային կայունություն (1-ից 10 սանդղակ)	5,64	7,39	9,09
Սեփականության իրավունքի պահպանում (1-ից 10 սանդղակ)	4,66	6,75	9,24
Բարեկեցության մակարդակ (1-ից 10 սանդղակ)	3,77	5,49	8,15
Տնտեսության նկարագիր (1-ից 10 սանդղակ)	5,16	6,43	7,82
Կայունություն (1-ից 10 սանդղակ)	3,51	5,14	7,74
Վերափոխումների կառավարման բարդության աստիճան (1-ից 10 սանդղակ)	6,78	4,80	2,01
Կառավարման ներուժ (1-ից 10 սանդղակ)	4,02	5,74	7,50
Ռեսուրսների արդյունավետ օգտագործում (1-ից 10 սանդղակ)	3,56	5,19	7,65
Համաձայնության ձեռքբերում (1-ից 10 սանդղակ)	4,14	5,79	8,33
Միջազգային համագործակցություն (1-ից 10 սանդղակ)	5,64	6,99	9,06

Ընդ որում, ի տարբերություն բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշի, տնտեսական աճի ցուցանիշի շուրջ ցրվածությունը լավագույն կլաստերում ևս անհամեմատ փոքր է: Նույնը չի կարելի ասել վատագույն կլաստերում ներառված երկրների համար, որտեղ միջինից ստանդարտ շեղումը համեմատաբար փոքր է բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշի և ավելի բարձր՝ ՀՆԱ աճի ցուցանիշի դեպքում, ինչը, մեր կարծիքով, մասամբ

<sup>5</sup> Հաշվարկել է հեղինակն ըստ Բերթելսման հիմնադրամի և Համաշխարհային բանկի տվյալների:

վկայում է դեռևս չիրացված տնտեսական ներուժի մասին: Այնուհանդերձ, բնակչության բարեկեցությունը բնութագրող այլ ցուցանիշներով, մասնավորապես՝ կյանքի սպասվող տևողության, ՀՆԱ-ում առողջապահական ծախսերի մասնաբաժնով, սոցիալ-տնտեսական վերափոխումների առումով համեմատաբար ցածր արդյունք արձանագրած երկրների խումբը դեռևս հետ է մնում մյուս երկու կլաստերների երկրներից:

Ջարգացող տնտեսությամբ երկրներում ձևավորված կառուցվածքային և ինստիտուցիոնալ համամասնությունների վերլուծության կարևոր ուղղություն է ՀՆԱ ճյուղային կառուցվածքի դիտարկումը: Տնտեսության ճյուղային կառուցվածքի նույնիսկ հպանցիկ վերլուծությունն ի ցույց է դնում այն փաստը, որ երրորդ կլաստերում ընդգրկված երկրներում անհամեմատ բարձր է ծառայությունների ոլորտի տեսակարար կշիռը (65,2%), փոխարենը նկատելիորեն փոքր է գյուղատնտեսության ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում (3,9%): Այս առումով, ակնհայտ է վատագույն կլաստերում հայտնված երկրների տնտեսության մրցակցային հնարավորությունների ոչ բավարար մակարդակը: Ուստի, այս համատեքստում, չափազանց կարևոր նշանակություն է ստանում սոցիալ-տնտեսական վերափոխումներ նախաձեռնած և ցածր արդյունքներ արձանագրած երկրներում տնտեսության արդյունավետ կառուցվածքի ձևավորմանն ուղղված պետական քաղաքականության իրականացումը, որի առանցքում պետք է լինեն տնտեսության կառուցվածքային գերակայությունների հստակեցումը և այս ուղղությամբ վերափոխումների իրագործումը:

Անդրադառնալով ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքին՝ կարելի է նկատել, որ այն էականորեն տարբերվում է լավագույն կլաստերում ընդգրկված տնտեսությունների կառուցվածքից: Թեև վերջին տարիներին Հայաստանի ՀՆԱ-ում նկատելիորեն աճել է ծառայությունների տեսակարար կշիռը, այնուհանդերձ, ՀՆԱ կառուցվածքում դեռևս նշանակալի է գյուղատնտեսության մասնաբաժինը: Հարկ է նշել, որ այս ցուցանիշով Հայաստանը զգալի չափով գերազանցում է անգամ իր խմբի միջին գնահատականը, մինչդեռ ծառայությունների ոլորտի տեսակարար կշիռով՝ զիջում: Այս առումով, հիմք ընդունելով լավագույն կլաստերի գնահատականները, մեկ անգամ ևս կարևորվում է պետական կառուցվածքային քաղաքականության իրականացումը, որն ուղղված է լավագույն երկրների գերակայություններից բխող տնտեսության կառուցվածքի ձևավորմանը, որում ավելի մեծ տեսակարար կշիռ ունի ծառայությունների ոլորտը:

Ջարգացող երկրներում կարևոր հիմնախնդիր է նաև համաշխարհային շուկայում հայրենական ապրանքների և ծառայությունների մրցունակության մակարդակի բարձրացմանն ուղղված պետական աջակցության քաղաքականության իրականացումը: Այս առումով, կլաստերացման արդյունքները վկայում են, որ ՀՆԱ-ում և՛ արտահանման (66,3%), և՛ ներմուծման (62,4%) մասնաբաժնով առաջատար դիրք են գրավում լավագույն կլաստերի երկրները: Սա համաշխարհային շուկայում լավագույն երկրների էական դերակատարության և տնտեսության մրցունակության վկայությունը պետք է համարել: Ուստի, բնական է, որ, ի տարբերություն սոցիալ-տնտեսական վերափոխումների առումով վատագույն և միջին արդյունքներ արձանագրած երկրների, լավագույն կլաստերի երկրների պարագայում ՀՆԱ-ում արտահանման մասնաբաժինը գերազանցում է ներմուծման մասնաբաժինը, ինչն արտահանում-ներմուծում օպտիմալ փոխհարաբերակցության վկայությունն է:

Տնտեսության մրցունակությունը մեծապես պայմանավորված է նաև այն հանգամանքով, թե ինչ չափով են երկրում արտադրական հզորություններն ընդլայնվում և արդիականացվում: Այս առումով, կարևոր նշանակություն է ստանում ՀՆԱ-ում ներդրումների մասնաբաժնի դիտարկումը, որը երկրի ներդրումային ակտիվության կարևոր բնութագրիչն է: Ստացված արդյունքները վկայում են, որ սոցիալ-տնտեսական վերափոխումների ցածր արդյունք գրանցած երկրներում առավել մեծածավալ ներդրումներ են կատարվում, ինչը հիմնականում պայմանավորված է այս երկրներում իրականացվող ռազմավարության յուրահատկությամբ: Այլ ձևակերպմամբ՝ այս երկրներում ներկա սերունդների բարեկեցությունը «զոհում են» հանուն ապագա սերունդների: Ուստի զարմանալի չէ, որ վատագույն կլաստերում ընդգրկված երկրների համախառն կապիտալի մասնաբաժինը ՀՆԱ-ում (24%) բարձր է լավագույն կլաստերում ընդգրկված երկրների նույն ցուցանիշից (23%) և չնչին չափով է զիջում վերափոխումների միջին արդյունք արձանագրած երկրների (25.3%) խմբի միջին գնահատականը: Սակայն այս տրամաբանությունն իմաստ ունի այն դեպքում, երբ կապիտալ ծախսերի ցածր մակարդակին համապատասխանում է ընթացիկ սպառման բարձր աստիճանը: Հակառակ դեպքում, ինչպես, օրինակ, Հայաստանի պարագայում է, այս ցուցանիշի ցածր մակարդակը վկայում է տնտեսության ներդրումային գրավչության ցածր աստիճանի մասին:

Անդրադառնալով զարգացող տնտեսությամբ երկրներում ինստիտուցիոնալ վերափոխումների գնահատականներին՝ հարկ է նշել, որ լավագույն կլաստերի միջին գնահատականները որոշակի վերապահումներով կարելի է համարել թիրախային՝ վատագույն և միջին կլաստերում հայտնված երկրների համար: Ստացված արդյունքներից պարզ է դառնում, որ կառավարման ցուցանիշների մասով միջին և լավագույն կլաստերների միջև տարբերությունն առավել նկատելի է հատկապես *ըստ քաղաքական կայունություն և բռնությունների, ահաբեկչությունների բացակայություն, կոռուպցիայի վերահսկման աստիճան* ցուցանիշների:

Վերը նշվածով հանդերձ՝ կլաստերացման գործընթացի արդյունքները հնարավորություն են տալիս իրականացնելու երկրների վերափոխումների արդյունքների համեմատական վերլուծություն: Այսպես՝ կլաստերների կազմի վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջին կլաստերում գերակշռում են թերզարգացած ժողովրդավարական ինստիտուտներ և սոցիալ-տնտեսական զարգացման համեմատաբար ցածր մակարդակ ունեցող երկրները: Ուստի, կարող ենք եզրակացնել, որ այս երկրներում լայնածավալ սոցիալ-տնտեսական վերափոխումների անհրաժեշտություն կա:

Նույն տրամաբանությունը կիրառելով երկրորդ խմբում ընդգրկված երկրների համար՝ կարող ենք փաստել, որ չնայած այս երկրները սոցիալ-տնտեսական վերափոխումներ են նախաձեռնել, սակայն դեռևս ցածր արդյունքներ են արձանագրել: Ուստի, այս երկրներում շարունակվում են ինստիտուցիոնալ և կառուցվածքային վերափոխումները: Ուշագրավ է, որ 2016 թ. այս խմբում են հայտնվել Հայաստանը, Ռուսաստանը, Վրաստանը, Թուրքիան, Չինաստանը, Ուկրաինան, իսկ Ադրբեջանը և Իրանը ընդգրկվել են վատագույն արդյունքներ արձանագրած երկրների ցանկում:

Երկրների դասակարգումն ըստ կլաստերների, 2016 թ.<sup>6</sup>

Կլաստեր 1՝ վատագույն	Կլաստեր 2՝ միջին	Կլաստեր 3՝ լավագույն
Աֆղանստան	Ալբանիա	Սինգապուր
Ալժիր	Արգենտինա	Սլովակիա
Ադրբեջան	Հայաստան	Սլովենիա
Բանգլադեշ	Բահրեյն	Հվ. Կորեա
Բելառուս	Բենին	Լեհաստան
Բուրկինա Ֆասո	Բոլիվիա	Ռումինիա
Բուրունդի	Բոսնիա և Հերց.	Չեխիա
Կամբոջա	Բրազիլիա	Էստոնիա
Կամերուն	Չինաստան	Հունգարիա
Կենտրոնաաֆրիկ. Հանր.	Կոլումբիա	Լատվիա
Չադ	Դոմինիկյան Հանր.	Լիտվա
Կոնգո	Էկվադոր	Խորվաթիա
Կոտ դի Վուար	Էլ Սալվադոր	Ուրուգվայ
Եգիպտոս	Վրաստան	Բոսնիանա
Գվատեմալա	Գանա	Բուլղարիա
Գվինեա	Հոնդուրաս	Չիլի
Իրան	Հնդկաստան	Կոստա Ռիկա
Քենիա	Ինդոնեզիա	
Լաոս	Հորդանան	
Մադագասկար	Ղազախստան	
Մալավի	Ղրղզստան	
Մալի	Լիբանան	
Մոզամբիկ	Մակեդոնիա	
Նեպալ	Մալայզիա	
Նիգեր	Մեքսիկա	
Նիգերիա	Մոլդովա	
Պակիստան	Մոնղոլիա	
Ռուանդա	Մարոկո	
Սիերա Լեոնե	Նամիբիա	
Սուդան	Նիկարագուա	
Տաջիկստան	Պարագվայ	
Տանզանիա	Պերու	
Տոգո	Ֆիլիպիններ	
Թուրքմենստան	Ռուսաստան	
Ուզբեկստան	Սաուդ. Արաբիա	
Վենեսուելա	Սենեգալ	
Ջիմբաբվե	Սերբիա	
	ՀԱՀ	
	Շրի Լանկա	
	Թաիլանդ	
	Թունիս	
	Թուրքիա	
	Ուգանդա	
	Ուկրաինա	
	Վիետնամ	
	Չամբիա	

Ինչ վերաբերում է երրորդ կլաստերին, ապա այստեղ հիմնականում տեղ են գտել առավել նպատակային վերափոխումներ իրականացրած և համեմատաբար բարձր արդյունքներ արձանագրած երկրները: Հատկանշական է, որ այս խմբում են առավել կայացած և գործուն ինստիտուտներ, սոցիալ-տնտեսական զարգացման համեմատաբար բարձր մակարդակ ունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Սինգապուրը, Հարավային Կորեան, Լեհաստանը, Ռումինիան, Էստոնիան և այլն: Մենք նմանատիպ վերլուծություն ենք կա-

<sup>6</sup> Աղյուսակը կազմել է հեղինակը:

տարել նաև 2003–2014 թթ. առանձին ժամանակահատվածների համար: Մասնավորապես՝ եթե 2008 թ. և 2016 թ. կլաստերացման արդյունքում ստացել ենք 3 կլաստերներ, ապա 2003–2014 թթ. կլաստերների օպտիմալ քանակը 2 է: Այսինքն՝ 2003–2014 թվականների համար ձևավորված 2 կլաստերներից 1-ը տարանջատվել է 2-ի: Սա խոսում է վերջին տարիներին զարգացող տնտեսությամբ երկրներում իրականացված վերափոխումների ռազմավարությունների տարամիտման մասին:

Կարելի է նկատել, որ կլաստերային վերլուծությունը ստեղծագործական լայն տիրույթ ունի, որը հնարավորություն է տալիս դուրս գալու երկրների պարզ համեմատության շրջանակներից: Մասնավորապես՝ հետազոտության մեկ այլ կարևոր արդյունք է լավագույն կլաստերում հայտնվելու համար վերափոխումների ցուցանիշների շեմային արժեքների դուրսբերումը: Ուստի համար հիմք ենք ընդունել առանձին ցուցանիշներով լավագույն կլաստերի վատագույն արդյունքները: Շեմային արժեքները վերափոխումների ցուցանիշների այն նվազագույն արժեքներն են, որոնց պետք է ձգտի երկիրը լավագույն կլաստերում հայտնվելու համար: Այսկերպ ակնհայտ է դառնում առանձին երկրների ցուցանիշների շեղումը լավագույն կլաստերի բնութագրիչներից, որը կարևոր նշանակություն ունի վերափոխումների քաղաքականության նպատակայնության տեսանկյունից: Աղյուսակ 5-ում ամփոփված են լավագույն կլաստերի շեմային արժեքները և Հայաստանի համար համապատասխան գնահատականները:

Աղյուսակ 5

Լավագույն կլաստերի շեմային արժեքները 2016 թ.<sup>7</sup>

Ցուցանիշներ	Լավագույն կլաստերի նվազագույն արժեքը	Հայաստան
Կոռուպցիայի վերահսկման աստիճան (-2.5-ից 2.5 սանդղակ)	-0,31	-0,45
Կառավարման արդյունավետություն (-2.5-ից 2.5 սանդղակ)	-0,04	-0,14
Քաղաքական կայունություն և բռնությունների, ահաբեկչությունների բացակայություն (-2.5-ից 2.5 սանդղակ)	0,02	-0,29
Կարգավորման որակ (-2.5-ից 2.5 սանդղակ)	0,36	0,25
Ձայնի իրավունք և հաշվետվողականություն հասարակությանը (-2.5-ից 2.5 սանդղակ)	-0,14	-0,54
Պետականություն (1-ից 10 սանդղակ)	9,30	8,80
Քաղաքական մասնակցություն (1-ից 10 սանդղակ)	3,30	4,50
Իրավունքի գերակայություն (1-ից 10 սանդղակ)	5,80	4,30
Ժողովրդավարական ինստիտուտների կայունություն (1-ից 10 սանդղակ)	2,50	3,00
Քաղաքական և սոցիալական միասնացում (1-ից 10 սանդղակ)	5,30	5,70
Սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ (1-ից 10 սանդղակ)	5,00	4,00
Շուկա և մրցակցություն (1-ից 10 սանդղակ)	8,00	6,30
Արժուրային և գնային կայունություն (1-ից 10 սանդղակ)	7,00	7,00
Սեփականության իրավունքի պահպանում (1-ից 10 սանդղակ)	8,00	8,00
Բարեկեցության մակարդակ (1-ից 10 սանդղակ)	7,00	6,00
Տնտեսության նկարագիր (1-ից 10 սանդղակ)	5,00	5,00
Կայունություն (1-ից 10 սանդղակ)	6,50	5,00
Վերափոխումների կառավարման բարդության աստիճան (1-ից 10 սանդղակ)	3,40	4,30
Կառավարման ներուժ (1-ից 10 սանդղակ)	5,00	4,30
Ռեսուրսների արդյունավետ օգտագործում (1-ից 10 սանդղակ)	5,70	4,30
Համաձայնության ձեռքբերում (1-ից 10 սանդղակ)	5,30	5,00
Միջազգային համագործակցություն (1-ից 10 սանդղակ)	6,00	6,00

<sup>7</sup> Հաշվարկել է հեղինակն ըստ Բերթելսման հիմնադրամի և Համաշխարհային բանկի տվյալների:

Կարելի է նկատել, որ, որոշ գնահատականներով, մասնավորապես՝ քաղաքական մասնակցություն, ժողովրդավարական ինստիտուտների կայունություն, քաղաքական և սոցիալական միասնացում ցուցանիշներով Հայաստանը գերազանցում է վատագույն կլաստերի շեմային ցուցանիշները: Մինչդեռ, վերափոխումների տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող շուկա ու մրցակցություն, իրավունքի գերակայություն, ռեսուրսների արդյունավետ օգտագործում, կայունություն ցուցանիշներով Հայաստանը նկատելիորեն հետ է մնում լավագույն կլաստերի վատագույն արդյունք արձանագրած ցուցանիշներից: Այս համատեքստում կարևոր նշանակություն են ստանում պետական այնպիսի քաղաքականության մշակումն ու իրականացումը, որի առանցքում պետք է լինեն մենաշնորհների դեմ պայքարը, մրցակցային միջավայրի ստեղծումը, կառավարության կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, վերափոխումների կառավարման արդյունավետության մակարդակի բարձրացումը, կոռուպցիայի դեմ պայքարը, անկախ դատական համակարգի ձևավորումը, քաղաքացիական իրավունքների երաշխավորումն ու իրացումը:

Այսպիսով՝ կլաստերային վերլուծության գործիքակազմի կիրառումը հնարավորություն է տալիս իրականացնելու զարգացող տնտեսությամբ երկրների դասակարգում՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական վերափոխումների քաղաքականության ընդհանրությունները, ինչպես նաև երկրների խմբերի համեմատական վերլուծություն: Հարկ է նշել, որ ստացված արդյունքները կարևոր նշանակություն ունեն զարգացող տնտեսությամբ երկրների վերափոխումների քաղաքականության ուղենիշների հստակեցման, չափանմուշային երկրից շեղման աստիճանի բացահայտման, մեխանիզմների ճիշտ ընտրության և նպատակայնության ապահովման առումներով:

### Օգտագործված գրականություն

1. Орлова И.В., Многомерный статистический анализ в экономических задачах: компьютерное моделирование в SPSS, учебное пособие. М., 2009.
2. Рустамов Э., Принципы эволюционной модернизации переходных экономик, "Вопросы экономики", N7, 2009.
3. Макашева Н.А., Экономическая наука в эпоху трансформации (Историко-методологический аспект) // Общественные науки и современность, №5, 2000.
4. Данилов А.Н., Переходное общество: проблемы системной трансформации, Минск, "Харвест", 1998.
5. International Monetary Fund, 25 years of transition post-communist Europe and the IMF, Regional Economic Issues Special Report, October 24, 2014.
6. Բերթելսման հիմնադրամի պաշտոնական ինտերնետային կայք. <https://www.bti-project.org/en/home/>
7. Համաշխարհային բանկի պաշտոնական ինտերնետային կայք. <http://www.worldbank.org/>

**АНИ ХАЧАТРЯН***Аспирант кафедры Экономической теории АГЭУ****Статистический анализ результатов социально-экономических реформ в развивающихся странах.–***

В статье мы пытаемся с помощью кластерного анализа классифицировать развивающиеся страны в однородные группы с точки зрения результатов социально-экономических реформ, определить характеристики групп и, исходя из этого, осуществить сравнительный анализ. Полученные результаты кластерного анализа имеют важное значение для выбора ориентиров, пересмотра механизмов, выявления особенностей социально-экономической политики, а также комплексного анализа результатов социально-экономических реформ.

**Ключевые слова:** *социально-экономические реформы, кластерный анализ, развивающиеся страны, социально-экономическая политика.*

JEL: C1, N30, O1

**ANI KHACHATRYAN***Post-graduate at the Chair of  
Theory of Economics at ASUE****Statistical Analysis of the Results of Socio-economic Reforms in Developing Countries.–***

In the article we have tried to classify countries with the help of cluster analysis and split them into groups that have the same descriptives and have carried out comparative analysis. The results of our analysis are essential in the context of choosing priorities, reviewing the mechanisms, revealing the main features of socio-economic reform policy, and comprehensive analysis of the results of reforms.

**Key words:** *socio-economic reforms, cluster analysis, developing countries, reform policy.*

JEL: C1, N30, O1